

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱԹԻՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ Է

Այսօր Երեւանի **Մարիոթ-Արմենիա** հյուրանոցում կմեկնարկի ,Հայկական համայնքներն արդի փուլում. գոյապահպանություն, հեռանկարներ երկօրյա գիտագործնական կոնֆերանսը, կազմակերպմամբ Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի, **Նորավանք** գիտակրթական հիմնադրամի եւ **Երկիր** հասարակական կազմակերպության: Այդ առթիվ ստորեւ հրատարակում ենք հայրենադարձության եւ հիմնավորման **Երկիր** հ/կ միության խորհրդի նախագահ Սեւակ Արծրունու հետ հարցազրույցը՝ առայժմ առանց մեկնաբանության:

- Խնդրում եմ բնութագրել Հայաստանի անկախությունից հետո հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները:

- Դժվար է այսօր խոսել հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների մասին ընդհանրացումներով, եթե ուզում եք ընդհանրացնել, ապա պատկերը այսպիսին է:

Սփյուռքը միասնական կատեգորիա չէ: Այսօր մեկ սփյուռք չէ, այլ սփյուռքներ են, նույնիսկ յուրաքանչյուր համայնքում կան մի քանի սփյուռքներ: Դրանցից յուրաքանչյուրն առանձին երեւոյթ է եւ ունի տարբեր մտաձեւակերպ ու նկարագիր: Գիտակցելով այս ամենը, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել որոշակի օրինաչափություններ եւ կատարել ընդհանրացումներ:

Անկախության հաստատումից անմիջապես հետո թե՛ հայաստանաբնակ հատվածի եւ թե՛ սփյուռքահայության մեջ իրար նկատմամբ ընկալումներում գերակայում էին իդեալները: Սփյուռքահայությունը Հայաստանը դիտում էր որպես կորուսյալ հայրենիք, իսկ Հայաստանի բնակչությունը սփյուռքին նայում էր որպես ազգի մի հատվածի, որը հետեւանք լինելով ցեղասպանության եւ բռնի տեղահանման՝ հարկադրաբար է իր գոյությունը տանում Հայաստանից դուրս: Սակայն կյանքը էական շտկումներ մտցրեց այդ պատկերացումներում:

Արդեն Հայաստանի անկախ գոյության առաջին իսկ տարիներից, Լեւոն Տեր-Պետրոսյանի օրոք, սփյուռքահայությունը ,ճեռքերը լվացե Հայաստանի ճակատագրից, սահմանափակվելով հայրենիքին, որպես խղճի պարտք, նյութական օժանդակություն ցուցաբերելով, իսկ Հայաստանն էլ սկսեց սփյուռքին նայել որպես հարուստ բարեկամի, որը լավ կանի չխառնվի նրա գործերին, բայց, ինչքան կարող է թող օգնի: Այսինքն՝ ստեղծվեց սփյուռքը որպես ,կթան կովե ընկալման պատկերը: Ազգը ճեղքվեց:

Դա կատարվեց առաջին հերթին այն պատճառով, որ սփյուռքի 3-րդ եւ 4-րդ սերունդների հայությունը պատրաստ չգտնվեց ամեն ինչ թողնել, պատերազմի ու շրջափակման պայմաններում գալ ու բնակվել Հայաստանում: Եվ երկրորդ, ինքը՝ Հայաստանը պատրաստ չգտնվեց իր դռները բացելու սփյուռքի առջեւ:

Եվ այսօր մենք ականատես ենք, որ Հայաստանի քաղաքացին սփյուռքն ընկալում է որպես օտար, քննադատելի եւ խոցելի մի երեւոյթ, իսկ սփյուռքահայերի մեծամասնությունը Հայաստանի եւ հայաստանցու ճակատագրի նկատմամբ պարզապես անտարբեր է: Ներկայում ո՛չ Հայաստանում եւ ո՛չ էլ Հայաստանից դուրս չկա ազգային մի ծրագիր, ազգային արժեքների մի ընդհանուր սանդղակ, ինչը հնարավորություն կընձեռի այս ամենը համակարգելու:

Բնականաբար այս կացությունը շատ վտանգավոր է թե՛ Հայաստանի եւ թե՛ սփյուռքի ապագայի համար: Մենք այժմ հայտնվել ենք այնպիսի մի իրավիճակում, երբ հայության մոտ 4/5-ը ապրում է Հայաստանի (ՀՀ եւ ԼՂՀ) սահմաններից դուրս՝ սփյուռքում եւ միայն 1/5-ը՝ հայրենիքում: Եվ ազգի 4/5 գերակայող մասն արդեն ուժացել է, շարունակում է ուժանալ ոչ միայն հեռավոր սփյուռքում, այլեւ մեր պատմական հայրենիքի՝ Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի մեջ ընդգրկված հատվածներում բնակվող հայությունը:

Եվ ամենասարսափելին այն է, որ մենք կորցրել ենք, նույնիսկ ծաղրում ենք այն արժեքներն ու հասկացությունները, որոնք 1988-ին պարզ ճշմարտություններ էին: Եթե 1988-ին որեւէ մեկն ասեր, որ 2007-ին հայրենադարձության ծրագիրը ազգովին սխալ ու անիրականանալի ենք հայտարարելու, ապա գուցե ազգի դավաճան համարվեր:

,Երկիրե միությունն ավելի քան երկու տարի պայքարում է հայրենադարձության օրենքի նախագիծը ՀՀ ԱԺ օրակարգում ընդգրկելու կամար: Ցավոք՝ ապարդյուն:

Այսօր Հայաստանի քաղաքական շրջանակները եւ ամբողջ սփյուռքահայությունը հայրենադարձության գաղափարին նայում են որպես աշխատատար եւ անհրականանալի մի ծրագրի: Կարծում են, սա է ամենասարսափելին եւ ամենամտահոգիչը մեր ապագայի համար:

- Ինչպիսի՞ն պետք է լինեն Հայաստան-սփյուռք փոխհարաբերությունները: Ո՞րն է հարցի լուծումը:

- Լուծումը մեկն է՝ հայրենադարձությունը՝ հայ ազգի բոլոր հատվածների համախմբումը պատմական հայրենիքում եւ նրա շուրջը, մեր ազգային ներուժի, էներգիայի կենտրոնացումը դեպի հայրենիք: Մի բան հստակ է՝ սփյուռքը չի կարող ինքնանպատակ լինել, իսկ հայրենիքը ինքնանպատակ է: Պետք չէ այլեւս զբաղվել ինքնախաբեությամբ. սփյուռքը մահանում է, կարելի է ասել նույնիսկ, որ արդեն մասամբ մահացել է: Այսօր այլեւս չկան Ռումինիայի, Եգիպտոսի, Հնդկաստանի, Բաքվի համայնքները: Մենք այսօր կորցրել ենք նույնիսկ ԱՄՆ-ի այն համայնքը, որը ձեւավորվել էր մինչեւ 1915 թ.-ի Եղեռնը կամ Եղեռնից անմիջապես հետո. ԱՄՆ-ի ներկայիս հայ համայնքը կազմում է հիմնականում Մերձավոր եւ Միջին Արեւելքից ու Հայաստանից նոր արտագաղթած կամ տեղափոխված հայությունը:

Ուսումնասիրությունները փաստում են, որ Լիբանանում ու Ֆրանսիայում մեր երբեմնի հզոր համայնքներն արդեն ,կարապի երգն են երգում: Այսինքն՝ սա վերջի սկիզբն է: Եթե համենատենք 1970-ականների Լիբանանն ու այսօրվանը, կտեսնենք, որ 30 տարում այդ համայնքը, որը հավակնում էր Երեւանից հետո հայության քաղաքական հզորագույն կենտրոնը լինելուն, օրեցօր մաշվում է եւ արդեն, կարելի է ասել, ոչինչ չի ներկայացնում: Ֆրանսիան էլ, որը Պոլսից ու Թիֆլիսից հետո գաղթաշխարհի իր ազդեցությամբ երրորդ մշակույթի օրրան էր, նույն վիճակում է հայտնվել: Այժմ, եթե Ֆրանսիայում փոքր-ինչ քաղաքական շարժ կա, հիմնականում Լիբանանից եւ Սիրիայից արտագաղթածների շնորհիվ է:

Վերջերս ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ սփյուռքն, ըստ էության, դիտարկվում է որպես ինքնանպատակ մի կառույց, որի առաքելությունն է, մեջբերում են, ,մասնակցել Հայաստանի եւ Արցախի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը եւ որը ,մի յուրօրինակ կամուրջ է Հայաստանի եւ միջազգային հանրության միջեւ: Բայց այդպիսի այդ համակարգը

կենսունա՞կ է: Բոլորս էլ ներքուստ շատ լավ գիտակցում ենք, որ ո՛չ, սակայն, զբաղվում ենք ինքնախաբեությամբ:

Ուրեմն, ազգի ապագայի համար յուրաքանչյուր հեռանկարային որոշում ընդունելուց առաջ նախ պետք է հաշվի նստենք այն ճշմարտության հետ, որ սփյուռքին ի բնե հատուկ է մահը: Իսկ մենք արդեն կորցնելով սփյուռքի մեծ մասը՝ շարունակում ենք հանգիստ նայել մնացածի անհետացմանը:

Կարծում եմ, որ սփյուռքը մինչև իր անխուսափելի վախճանը պետք է ծառայի հայրենիքի հզորացմանը, ինչն առաջին հերթին նշանակում է նպաստել իր աշխարհասփյուռ զավակներին Հայաստան վերադարձնելու գործընթացին: Հայրենադարձությունը բազմաթիվ խնդիրների լուծման բանալին է:

- Որո՞նք են հայրենադարձությանը խոչընդոտող գործոնները:

- Այս նպատակի իրականացումը ոչ մի գաղափարախոսություն չի կարող արգելել, արդեն ասել եմ, որ միայն սուտ գաղափարներով մենք մեզ խաբում ենք՝ փորձելով ապացուցել, որ ազգային այս նպատակը սխալ է կամ անիրականանալի: Առ այսօր մեզ խանգարել է հիմնականում երկու երեւոյթ:

Առաջինը բարդ է մեծ ռեսուրսների ներգրավում ու ինքնանվիրում պահանջող ծրագրերի նկատմամբ Հայաստանում ու սփյուռքում տիրող ազգային համընդհանուր ծուլությունն է:

Երկրորդը մասնավոր է կուսակցական շահերի գերադասումն է ընդհանուր ազգային շահերից:

Ես կարծում եմ, որ ինչպես սփյուռքն է ինքնանպատակ դարձել, այնպես էլ ինքնանպատակ են դարձել մեր սփյուռքյան կառույցներն ու կուսակցությունները, որոնք գուցե ,Հայաստանն էի ,հայրենադարձությունն գաղափարների մեջ տեսնում են իրենց տկարացումը էի իրենց ապագա լուծարումը:

Բայց եկեք վերջապես հասկանանք ու գիտակցենք, որ նրանք այսպես թե այնպես կորչելու են, ձուլման ալիքը նրանց էլ է տանելու: Այսպիսով, նրանց ընդամենը հաջողվում է հանուն իրենց եսասիրական շահերի հայրենիքն ու ազգը զրկել սփյուռքի ներկայիս մարդկային եւ այլ ռեսուրսներից:

- Դա սփյուռքում, իսկ Հայաստանում:

- Հայաստանում նույնպես մասնավոր եւ կուսակցական շահերն են պատճառ դարձել, որ իշխանության մաս կազմող որոշ ուժեր փորձել են մենաշնորհել սփյուռքի հնարավորությունները: Նրանք երկյուղում են, որ հայրենադարձությունը ներքաղաքական հավասարակշռության փոփոխություններ կառաջացնի: Իշխանությունների մեջ հայրենադարձության ծրագրի մեկնարկման ,ծուլությանե հիմնական պատճառն այդ բարդոյթների հետ է կապված եղել:

Կարծում եմ, կհիշեք անցած տարի Հայաստան-սփյուռք համաժողովը բոյկոտելու ,երկիրե միության որոշումը, ինչին հաջորդեց ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանին ուղղված բաց նամակը, որում մենք նրանից պահանջում էինք արտահայտել իր պաշտոնական դիրքորոշումը հայրենադարձություն երեւոյթի եւ հայրենադարձության պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ: Հայաստանյան երկու օրաթերթերում եւ բազմաթիվ համացանցային կայքերում հրապարակված այդ նամակն առ այսօր անպատասխան է մնում: Պրն նախարարը նույնիսկ բարոյական պարտավորություն չզգաց պատասխանելու նամակի հարցերին: Այդ լռությունը կարելի է մեկնաբանել այսպես. պրն նախարարը չէր կարող հրապարակայնորեն կողմ արտահայտվել հայրենադարձության ծրագրի իրականացնելու վերաբերյալ, միեւնույն ժամանակ չէր կարող բացահայտորեն մերժել հայրենադարձությունը: Ուստի նա որոշեց ցուցաբերել անհեռանկարային եւ անսկզբունք դիրքորոշում՝ արհամարհանք...

Այս արհամարհանքի պատճառով մենք պետք է զուրկ մնանք սփյուռքյան որակյալ մասնագետներից, չունենանք բավարար քանակով զինվորականներ, լիարժեք չներգրավենք սփյուռքի ներուժը մեր տնտեսության զարգացման գործում, չունենանք բավարար թվով աճող ընտանիքներ ու բնակչության վերարտադրության համար անհրաժեշտ թվով ծնունդներ: Մեզ պարտադրված մեկուսացումն էլ ավելի կխորանա, մեր երկիրը էլ ավելի կնմանվի գավառական միավորի:

Նրանք, ովքեր ասում են, որ Հայաստանն անցել է բազմաթիվ արհավիրքներով, սակայն կա ու շարունակում է գոյատևել, պետք է հասկանան, որ Հայաստանը կար, որովհետեւ մենք 400 հազ. քառ. կմ-ի վրա տարածված ժողովրդագրական աճի բնականոն հավասարակշռություն էինք պահպանում մինչեւ 1915 թվականը: Չնայած

այդ ժամանակ էլ մենք արդեն տարածքներ էինք կորցնում, կոտորածների էինք ենթարկվում ու չունեինք ինքնիշխան պետություն, բայց կար գենոֆոնդ: Այսօր այդ ժողովրդագրական զարգացման ռեսուրսը չկա եւ մնացածն էլ ընդամենը 40 հազ. կմ-ի վրա է տեղակայված: Դրանից դուրս մնում է միայն Վրաստանի հայ փոքրամասնությունը, որը նույնպես արտագաղթի մեծ հակում է ցուցաբերում:

Իսկ Հայաստանը շրջափակման տակ պահելու թուրքական ծրագիրն ի վերջո նպատակ է հետապնդում՝ շարունակական տնտեսական տկարացման միջոցով ժողովրդագրական տկարացմանը հասնելը, եւ դա նրանց ու նրանց դաշնակիցներին արդեն 10 տարի հաջողվում է:

Հասկանալի է, որ Հայաստանի իշխանություններն ու սփյուռքի մի փոքր մասը փորձել են տնտեսական միջնորդվածություն ստեղծել: Բայց դա անհեռանկարային է: Որ կողմ դառնանք, որ ուղղությամբ էլ մեր հեռահար հայացքը նետենք, կտեսնենք, որ միակ լուծումը հայրենադարձության մեծ ծրագրի իրականացումն է: Հայրենադարձության ծրագիրը ժողովրդագրական, այն է՝ քաղաքական, տնտեսական, կրթամշակութային հսկա միջոցներ կվերադարձնի հայրենիք, միայն հայրենադարձության միջոցով Հայաստանը կկարողանա շարունակել իր գոյությունը այս տարածաշրջանում: Ուրիշ լուծում չկա: Մենք ոչ այնքան դեպի ծով ելքի խնդիր ունենք, որքան ժողովրդագրական: Մեր հիմնական խնդիրը սա է եւ ոչ թե ծով ունենալ-չունենալը: Ծատ պետություններ կան, որ դեպի ծով ելք չունեն, բայց հզոր են: Ծատ պետություններ կան, որ ոչ միայն պաշարված են եղել, այլեւ կարողացել են պատերազմել ու աշխարհի ամենամեծ պետություններին դիմակայել միայն այն պատճառով, որ ժողովրդագրական իմաստով հզոր են եղել: Սա իրականություն է:

Զրուցեց Ա. ԴԱՎԻԴՅԱՆՑԸ

<http://www.azg.am/AR/2007061917>